

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

Ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) բխում է «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրամիություն գործողությունների կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի ՆԿ-68-Ա կարգադրության պահանջից, և նախատեսվում է իրականացնել 2010-2011 թվականների ընթացքում: Ծրագրի մեջ հաշվի են առնված նաև ՀՀ-ում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրով և Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. ծրագրով նախատեսված առանձին ուղղությունները:

Մարդու և քաղաքացու իրավունքների պահպանության ու պաշտպանության սահմանադրական սկզբունքի կենսագործումը ոստիկանության գործունեությունում ենթադրում է բարեփոխումների այնպիսի բովանդակություն, որն ուղղակիորեն և դրականորեն կանդրադառնա հասարակության անդամների մեծամասնության վրա: Այդ առումով սույն **ծրագրի հաջող իրականացման ամբողջացված վերջնաարդյունքը պետք է լինի այն, որ քաղաքացիները զգան իրենց ավելի անվտանգ և վստահեն ոստիկանությանը:**

Ժողովրդավարական հասարակություններում Ոստիկանությունը պետք է լինի հաշվետու պետության և հասարակության առջև: Ոստիկաններն ամբողջությամբ պետք է նվիրվեն իրենց խնդիրների իրականացմանը, բացառելով դաժան, կամայական և խտրական վերաբերմունքը, ֆիզիկական և բարոյական բռնությունները, ցանկացած բնույթի կոռուպցիոն դրսևորումները: Ոստիկանության գործունեությունը պետք է լինի հնարավորինս թափանցիկ: Միևնույն ժամանակ, հանրային իշխանությունները պետք է աջակցեն ոստիկանության անձնակազմին, որը, երբեմն, իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ դառնում է անհիմն մեղադրանքների սուբյեկտ, ինչն էապես կարող է նվազեցնել ոստիկանության գործունեության արդյունավետությունը և կարող է որոշ դեպքերում օբյեկտիվորեն առաջացնել ոստիկանի կողմից իր գործառույթների իրականացման նկատմամբ անհետևողականություն:

Այսօր հասարակությունը և պետությունը բարեփոխված ոստիկանության, ժամանակակից ծրագրերով և մեթոդներով կրթված ոստիկանների կարիք ունեն. ակնհայտ է, որ այսօրվա

նստիկանության կարողությունները օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չեն կարող ամբողջությամբ գնահատվել այդպիսին: Անհրաժեշտ է մի կողմից նստիկանության համակարգ ներգրավել նոր՝ նստիկանի մասնագիտություն ստացած անձանց, և մյուս կողմից՝ վերապատրաստել ծառայության մեջ գտնվողներին և միաժամանակ անցկացնել լուրջ և խստապահանջ ատեստավորման գործընթաց, համակարգը «մաքրելով» ոչ արհեստավարժ և անաչառ ծառայողներից:

Ոստիկանության գործառնությունների պատշաճ իրականացումն էապես պայմանավորված է նաև նրանց սոցիալական և իրավական պաշտպանության երաշխիքների նախատեսմամբ և դրանց ապահովմամբ: Առանց վերջիններիս՝ դժվար է պատկերացնել վերը նշված խնդիրների իրականացումը, պրոֆեսիոնալ կադրերով համակարգի համալրումը և կայունությունը: **Սակայն պետության կողմից նստիկանների սոցիալական և իրավական համալիր պաշտպանության չիրականացումը չպետք է երբևէ արդարացնի նրանց կողմից մարդու իրավունքների խախտումները:**

Ոստիկանությունն իր գործառնություններն իրականացնում է հիմնականում հասարակության հետ շփման ձևով, և այդ առումով նստիկանության գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև հանրության աջակցությամբ:

Ոստիկանության հիմնական նշանաբանը պետք է լինի՝ **ՕԳՆԵԼ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵԼ:**

Ոստիկանության հիմնական խնդիրները պետք է լինեն՝

- ապահովել հասարակական անդորր, օրինականություն, հասարակական կարգ.
- պաշտպանել անձանց իրավունքներն ու ազատությունները.
- նախականիսել, կանխել, խափանել և բացահայտել հանցագործությունները.
- օգնել և օժանդակել հանրությանը, ապահովել մարդու անվտանգությունը:

Նշված խնդիրների ամբողջական և լիարժեք իրականացմանը հասնելու համար անհրաժեշտ է ներդնել օրենսդրական և վարչարարական նոր համակարգեր, նախատեսել պրակտիկ կիրառության նոր գործիքներ և մեթոդներ:

Ոստիկանության գործունեության արդյունավետությունն էականորեն է պայմանավորված նաև հասարակության, նրա յուրաքանչյուր անդամի կողմից ցուցաբերվող աջակցությունից, վստահությունից: Այդ կապակցությամբ ծրագիրն իր առջև նպատակ է դնում մի շարք միջոցառումների շնորհիվ բարձրացնել նստիկանության հանդեպ հանրային վստահության աստիճանը, նվազեցնել նստիկանությունում գոյություն ունեցող կոռուպցիոն ռիսկերը: Ծրագրի կարևորագույն նպատակներից է նաև համալիր միջոցառումների արդյունքում հասարակական անվտանգության աստիճանի բարձրացումը, որին հասնելու կարևոր գրավականներից են արհեստավարժ նստիկանի վերապատրաստումը և նոր տեխնիկական միջոցների ներդրումը: Միաժամանակ, ծրագրով նախատեսվում են առանձին միջոցառումներ՝ ուղղված քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացների հստակեցմանը, նստիկանության կողմից իրականացվող միգրացիոն

վարչարարության կատարելագործմանը, նոր կենսաչափական տվյալներով անձնագրերի և նույնականացման քարտերի ներդրման ուղղությամբ բարեփոխումների ապահովմանը, ինչպես նաև առանձին խումբ հանցագործությունների (թրաֆիկինգ, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, կազմակերպված հանցավորություն, կոռուպցիա, փողերի լվացում, համակարգչային հանցագործություններ) դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է՝

1.1. վերանայել ոստիկանության գործունեության ցուցանիշների առկա համակարգը, որը բացառապես ներառում է իրավախախտումների բացահայտման քանակական հատկանիշը:

1.2. քաղաքացիների հետ ոչ պրոֆեսիոնալ, անգուսպ, անհարգալից վերաբերմունքի դեպքերը դարձնել ծառայողական քննությունների առարակա՝ ապահովելով դրանց օբյեկտիվությունը և արդյունքների հրապարակայնությունը:

1.3. ապահովել կոռուպցիոն դրսևորումների դեպքերի մասին հայտնելու համակարգի ձևավորումը,

1.4. բարձրացնել վկաների, կոռուպցիայի գոհերի, առանց իրենց անձը բացահայտելու տեղեկատվություն տրամադրողների պաշտպանության արդյունավետությունը, ապահովել նրանց անվտանգության երաշխիքները:

1.5. հասարակական վայրերում սահմանել ամենօրյա տեխնիկական հսկողություն տեսադիտման սարքերով,

1.6. ստեղծել ոստիկանական հենակետեր հատկապես ոստիկանության տարածքային մարմիններից հեռու գտնվող բնակավայրերում.

1.7. տեղադրել երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում կատարվող իրավախախտումներն ամրագրող սարքեր խաչմերուկներում և երթևեկության մեծ ծանրաբեռնվածություն ունեցող փողոցներում,

1.8. վերանայել հատուկ միջոցները, սպառազինությունը, դրանք համալրել մահ չպատճառող միջոցներով,

1.9. հասարակական կարգի պահպանման ստորաբաժանումներում ներգրավված ոստիկանության ծառայողների համազգեստը, սպառազինությունը և ծառայության կազմակերպման կարգը համապատասխանեցնել ժամանակակից չափանիշներին,

1.10. հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման, ինչպես նաև բանակցություններ վարող եւ ՋԼՄ-ների հետ շփվող ծառայողների համար մշակել, ներդնել ուղեցույցեր, նշված ուղղություններով կազմակերպել պարտադիր դասընթացներ:

Վերոգրյալ խնդիրները լուծելու համար ամրագրվում են ոստիկանությունում բարեփոխումների հետևյալ ուղղությունները.

- կառուցվածքային բարեփոխումներ /առանձին ստորաբաժանումներում անցում քաղաքացիական հատուկ ծառայության, ոստիկանության ստորաբաժանումների գործառնությունների կրկնության բացառում, լիազորությունների հստակեցում, ստորաբաժանումների վերակազմակերպում /քառաստիճան ոստիկանական համակարգի ներդրում՝ կենտրոնական ապարատ, տարածքային, տեղամասային և ոստիկանական հենակետեր/: Այսինքն, պետք է հնարավորինս ապակենտրոնացնել ոստիկանական համակարգը՝ նախատեսելով առանձին ոստիկանակետերի ստեղծումը: Ոստիկանության աշխատանքները պետք է կազմակերպել այնպես, որպեսզի թե՛ աշխարհագրական և թե՛ սոցիալական առումով ապահովվի հանրապետության ծածկվածությունը. **«ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ ՊԵՏՔ Է ԸՆԼՆՉԻ ԻՐԵՆՑ ՏԱՐԱԾՔԸ ՄՊԱՍԱՐԿՈՂ ՈՍՏԻԿԱՆԻՆ»**.

- կրթական բարեփոխումներ /ոստիկանի մասնագիտության հիմնում, ոստիկանական կրթության առաջադիմական ստանդարտների ներդրում, առանձին նեղ մասնագիտություններով ոստիկանի պատրաստում, առաջխաղացման համար ոստիկանների ուսուցում, վերապատրաստում և ատեստավորում/,

- ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառի բարեփոխումներ /կենտրոնացված դիտակետերի ստեղծում, GPS համակարգի գործարկում, խախտում հայտնաբերող սարքերի տեղադրում, անձնակազմի ուսուցում, ճանապարհային ոստիկանության ֆինանսական ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների պարբերական հրապարակում/,

- քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ /քաղաքացիների առանձին իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես՝ քրեադատավարական երաշխիքների, երթեր, ցույցեր և հանրահավաքներ անցկացնելու լրացուցիչ երաշխիքների ապահովում, մասնագիտացված ոստիկանական ստորաբաժանումների ստեղծում և այլն/.

- քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների էլքի և մուտքի հետ կապված գործընթացների հստակեցում, ոստիկանության կողմից իրականացվող միգրացիոն վարչարարության կատարելագործում.

- նոր անձնագրային համակարգի ներդրում (կենսաչափական տվյալներով անձնագրերի և նույնականացման քարտերի ներդրման նպատակով համալիր միջոցառումների իրականացում).

- թրաֆիկինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում.

- կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման, կիրեռհանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացում.

- այլ մարմինների և կազմակերպությունների հետ համագործակցության բարելավում (ապահովել լայն համագործակցություն իրավապահ մարմինների, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ, խորացնել միջազգային համագործակցությունը).

- ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ (թեժ գծի արդյունավետության բարձրացում, քաղաքացիների դիմում-բողոքների հաշվառման և վերահսկողության միասնական համակարգի ստեղծում, հասարակության և ՋԼՄ-ների հետ համագործակցության բարելավում)։

- ոստիկանների սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ։

Սույն ծրագրի բոլոր ուղղություններով ոստիկանությունում կգործեն աշխատանքային խմբեր, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու կլինի տվյալ ոլորտի բարեփոխումների իրականացման ընթացքի համար։ Ընդհանուր համակարգումը կիրականացվի ՀՀ Ոստիկանության պետի տեղակալի գլխավորությամբ գործող՝ Ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից, որը ծրագրի կատարման վերաբերյալ ըստ պահանջվող հաճախականության տեղեկություններ կներկայացնի ՀՀ Նախագահի կողմից 2008 թվականի սեպտեմբերի 8-ի ՆԿ-189-Ա կարգադրությամբ՝ Եվրոպական կառույցների հետ համագործակցության շրջանակներում պետական մարմինների կողմից իրականացվող ընթացիկ աշխատանքների ապահովման և ՆԱՏՕ-ի անհատական գործընկերության գործողությունների ծրագրի և Եվրոպական միության Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի իրականացման նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովին և ՀՀ կառավարություն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳՍՅԱՆ

Դ.

Ծրագիր
Ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների

Հ/Հ	Ակնկալվող արդյունքը (նպատակը)	Միջոցառման անվանումը	Ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարողները
	1.	2.	3.	4.	5.
ա) Կառուցվածքային եւ կազմակերպական բարեփոխումներ					
1.	Ոստիկանությունում գործառնությունների հաստկեցում, անհարկի կրկնությունների բացառում	1.1. Ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայությունների, ուսումնական հաստատությունների եւ տարածքային մարմինների գործառնությունների վերանայման, դրանց իրականացման, մարդկային ռեսուրսներով ապահովվածության ուսումնասիրում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		1.2. «ՀՀ ոստիկանության կառուցվածքը և աշխատողների առավելագույն թիվը և ղեկավարի տեղակալների թիվը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19. 12.2002թ. 2069-Նզ որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն

2.	Քաղաքացիական հատուկ ծառայության ներդրում ուստիկանությունում	2.1. Ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայությունների, ուսումնական հաստատությունների եւ տարածքային մարմինների կանոնադրություններում փոփոխություններ կատարելու մասին, ինչպես նաեւ կազմ-հաստիքային փոփոխություններ կատարելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանների նախագծերի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		2.2. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկի հաստատում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Քաղաքացիական ծառայության խորհուրդ
		2.3. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների հաստիքացուցակի հաստատում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		2.4. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		2.5. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» և «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
		2.6. Մրցույթի թեստային փուլի հարցաշարերի և հարցազրույցի փուլի հարցերի պատրաստում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		2.7. Մրցույթի թեստավորման և հարցազրույցի փուլերի հարցաշարերի ձևավորման համար համապատասխան համակարգչային ծրագրերի ստեղծում և ներդրում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		2.8. Քաղաքացիական ծառայողների աշխատանքային կարգապահության ներքին կանոնների սահմանում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
3.	Ոստիկանության ծառայությունների եւ տարածքային մարմինների տեղեկատվական շտեմարանների	3.1. Ոստիկանության կողմից իրականացվող հաշվառումների ավտոմատացում, էլեկտրոնային շտեմարանների ստեղծում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն

	ինտեգրում եւ շահագործում միասնական համակարգչային գերատեսչական ցանցում	3.2. Առկա էլեկտրոնային շտեմարանների համատեղելիության ապահովում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
		3.3. Համակարգչային գերատեսչական ցանցում ծրագրային ապահովման ներդրում եւ տեղեկատվական համակարգի ստեղծում, տեղեկատվության հասանելիության ապահովում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
		3.4. «Համակարգչային գերատեսչական ցանցից օգտվելու կարգի մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	2011թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
4.	Պետական մատնադրոշմային գրանցման համակարգի ստեղծում	4.1. «Պետական մատնադրոշմային գրանցման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		4.2. Բնակչության պետական մատնադրոշմային ռեգիստրի կազմակերպում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
5.	Թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրում	5.1. Երեւան քաղաքի վարչության տարածքային բաժինների կառուցվածքում ոստիկանության հենակետերի ստեղծում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն, Երեւանի քաղաքապետարան
		5.2. «Կազմ-հաստիքային փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	2011թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		5.3. «Ոստիկանական հենակետերի տիպային գործառույթները սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	2011թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
6.	Երեւան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայության կատարելագործում	6.1. Երեւան քաղաքի հասարակական վայրերում տեսադիտման սարքավորումների ձեռքբերում եւ համակարգի ներդրում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, Երեւան համայնքի բյուջե	Ոստիկանություն, Երեւանի քաղաքապետարան
		6.2. Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կազմում ոստիկանական ուժերի եւ միջոցների օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, Երեւան համայնքի բյուջե	Ոստիկանություն, Երեւանի քաղաքապետարան
		6.3. Պարեկապահակետային ծառայության վերակարգերի աշխատանքում նոր մեթոդների ներդրում (առանց տրանսպորտային միջոցի)	2011թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն,

		իրականացվող ծառայության կրճատում)			
		6.4. Պարեկապահակետային ծառայությունը անհրաժեշտ հանդերձավորումով, հատուկ միջոցներով եւ զենքով ապահովում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
7.	Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ ենթակա տարածքային մարմինների օպերատիվ ստորաբաժանումներում քրեական հետախուզության ծառայության ճյուղային սպասարկման /նեղ մասնագիտացման/ սկզբունքի ներդրում	7.1. «Գազմ-հաստիքային փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		7.2. Գործառույթային վերաբաշխման մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	2011թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
բ) Կրթական բարեփոխումներ					
8.	Նախնական, միջին, բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում «ոստիկան» մասնագիտության սահմանում	8.1. «Ոստիկան» մասնագիտության պետական կրթական չափորոշիչի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Կրթության եւ գիտության նախարարություն
		8.2. «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.08.2007թ. 1038-Ն, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը» հաստատելու, ՀՀ կառավարության 18.05.2000 թվականի 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու եւ ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 12.01.2006թ. 73-Ն որոշումների մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Կրթության եւ գիտության նախարարություն, Ոստիկանություն

		մշակում			
9.	Ոստիկանության միասնական կրթահամալիրի (ուսումնական հաստատություն) կազմակերպում	9.1. «ՀՀ ոստիկանության կառուցվածքը և աշխատողների առավելագույն թիվը և դեկավարի տեղակալների թիվը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19. 12.2002թ. 2069-Ն գ որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		9.2. Ռազմական հաստատության նոր կառուցվածքի մշակում	2011թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		9.3. «ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2011թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
10.	Կրթական աստիճանական համակարգի ներդրում	10.1. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		10.2. «Ոստիկանության Ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնադիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.08.2003թ 1184-Ն որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		10.3. «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում՝ նախատեսելով բոլոր խմբերի պաշտոնների համար վերապատրաստման (որակավորման) դասընթացների պարբերաբար իրականացում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն

		10.4. «Ոստիկանության ծառայողի ատեստավորման անցկացման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.12.2002թ. 2147-Ն որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		10.5. Նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության համար ուսումնական նոր ծրագրերի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		10.6. Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսուցման նոր, առաջադիմական մեթոդների աստիճանական ներդրում (ինտերակտիվ, ներգրավված, խաղային և այլն)	2010թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
		10.7. Ուսումնական ծրագրում օտար լեզուներով շփման նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված դասընթացների ընդգրկում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
11.	Ուսումնական գործընթացում պրակտիկ փորձի կիրառում	11.1. Բարձր որակավորում ունեցող ոստիկանության բարձրագույն եւ գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների կողմից ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունում դասավանդման գործընթացին ներգրավում	2010-2011թթ.	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
12.	Ոստիկանության ուսումնական հաստատություն (համակարգ) ընդունվող թեկնածուների գիտելիքների և ունակությունների ստուգման նոր չափանիշների ներդրում	12.1. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		12.2. «Ոստիկանության Ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնադիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.08.2003թ 1184-Ն որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն

		12.3. «Ոստիկանությունում պաշտոնի նշանակման համար եռամսյա փորձաշրջան անցնելու կարգ և պայմաններ» սահմանելու մասին ՀՀ կառավարության 23.01.2003թ. 112-Ն որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		12.4. Ընդունելության թեստերի մշակում և դրանց համակարգչային գնահատման մեխանիզմի ներդրում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
13.	Ոստիկանության ուսումնական հաստատությունում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորում, նրանց մասնագիտական գիտելիքների մշտական համալրման իրական մեխանիզմների ստեղծում	13.1. «Ոստիկանության ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 16.01.2003թ. 25-Ն որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2011թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		13.2. «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2011թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
14.	Ոստիկանության համակարգի գործունեության կատարելագործմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների խթանում	14.1. Ոստիկանության ուսումնական հաստատությունում գիտական խորհրդի ձևավորում	2011թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		14.2. Ոստիկանության առջև ծառայած կիրառական խնդիրների համակարգում, դրանց գիտական մշակման առաջնայնության որոշում ու հետազոտությունների իրականացում	2011թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
15.	Միջազգային ոստիկանական ուսումնական համակարգին ինտեգրում	15.1. Միացում միջազգային կրթական տեղեկատվական ցանցին (CIPOL, POLIS և այլն)	2011թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն

	15.2. Համաձայնագրերի կնքում օտարերկրյա պետությունների ոստիկանական ուսումնական առաջատար հաստատությունների հետ կադրերի պատրաստման և վերապատրաստման ոլորտում	2011թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Արտաքին գործերի նախարարություն
	15.3. Ինտերպոլի հակակոռուպցիոն ակադեմիայում (Վիեննա) կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ընդգրկված ծառայողների վերապատրաստում	2010-2011թթ.	Պետական բյուջե	Ոստիկանություն
16. Ոստիկանության ուսումնական հաստատությունում նյութատեխնիկական բազայի բարելավում	16.1. Մասնագիտական լսարանների վերազինում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
	16.2. Գրադարանային ֆոնդի նորացում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
	16.3. Ուսուցանվողների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
	16.4. Ոստիկանության ուսումնական հաստատությունում քաղաքացիների և կազմակերպությունների վճարովի հիմունքներով կրթական ծառայությունների մատուցման մեխանիզմների ներդրման նպատակով ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2011թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
17. Ծառայողական պարապմունքների համակարգի կատարելագործում	17.1. «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.01.2003թ. 174-Ն որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2011թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
զ) Ճանապարհային երթուղիների անվտանգության բնագավառի բարեփոխումներ				
18. Խմածության աստիճանը տեղում որոշելու մեխանիզմի ներդրում	18.1. Մթափության վիճակի զննության տեխնիկական միջոցների ձեռքբերում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ	Ոստիկանություն

19.	Ճանապարհատրանսպորտային պատահարների, վարչական իրավախտումների, տրանսպորտային միջոցների եւ վարորդական վկայականների հաշվառման շտեմարանների ստեղծում	19.1. Համակարգչային ցանցի ստեղծում եւ ծրագրային ապահովում	2010թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ	Ոստիկանություն
20.	Երեւան քաղաքում եւ հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաեւ մայրուղիներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդրում	20.1. Տեխնիկական առաջադրանքի կազմում և մրցույթի կազմակերպում	2010թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		20.2. Տվյալների կուտակման կենտրոնի ստեղծում	2010թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ	Ոստիկանություն
		20.3. Տեխնիկական միջոցների եւ ծրագրերի ձեռքբերում եւ ներդրում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ	Ոստիկանություն
21.	Ճանապարհային ոստիկանության ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժը վերահսկող GPS տեղորոշիչների ներդրում	21.1. Տեխնիկական միջոցների եւ ծրագրերի ձեռքբերում եւ ներդրում	2010թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ	Ոստիկանություն
22.	Վարորդական վկայական ստանալու գործնական և տեսական քննության պայմանների բարելավում	22.1. Երեւան քաղաքում քննական ավտոդրոմի կառուցում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ	Ոստիկանություն
		22.2. Երևան քաղաքում մեկ ստորաբաժանման միջոցով վարորդական վկայականների տրման աշխատանքների կազմակերպում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ	Ոստիկանություն
23.	Ճանապարհային երթուղիների կանոնների ու դրանց խախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմերի կատարելագործում, տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող	23.1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «ՀՀ ճանապարհային երթուղիների կանոնները եւ տրանսպորտային միջոցների շահագործումն	2011թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն

	նորմերի հասակեցում	արգելող անսարքությունների եւ պայմանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում			
24.	Այլ պետություններում հաշվառված եւ ՀՀ տարածք մուտք գործող տրանսպորտային միջոցների ՀՀ-ում հաշվառման եւ հսկողության մեխանիզմների կատարելագործում	24.1. «Ճանապարհային երթելուության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2010թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Պետական եկամուտների կոմիտե
		24.2. «Տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման եւ հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1854-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» եւ «ՀՀ ժամանակավորապես ներմուծված տրանսպորտային միջոցներին հաշվառման փաստաթղթեր եւ հաշվառման համարանիշեր չտրամադրելու դեպքերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 30.08.2007թ. թիվ 1041-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Պետական եկամուտների կոմիտե
<p>դ) Քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ</p>					
25.	Ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանության ապահովում	25.1. Ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության հաշվետվության արդյունքների հանրային քննարկումների պարբերաբար	2010-2011թթ.	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն

		կազմակերպում			
		25.2. Ձերբակալված անձանց պահելու պայմանների բարելավում	2010-2011թթ.	Պետական բյուջե	Ոստիկանություն
26.	Մարդու եւ քաղաքացու խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու իրավունքի լրացուցիչ երաշխիքների ամրագրում	26.1. Ջանգվածային հրապարակային միջոցառումների իրավաչափ սահմանափակման, զանգվածային անկարգությունների ժամանակ ուժի կիրառման միջազգային փորձի ուսումնասիրում, ըստ անհրաժեշտության՝ իրավաստեղծ աշխատանքների իրականացում	2010թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
		26.2. Հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, նրանց կողմից զանգվածային անկարգությունների ժամանակ ֆիզիկական ուժի եւ հատուկ միջոցների գործադրման, ինչպես նաեւ բանակցություններ վարող եւ ՋԼՄ-ների հետ շփվող ծառայողների համար պարտադիր դասընթացների կազմակերպում:	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
27.	Հարցաքննվող անձի իրավական պաշտպանվածության լրացուցիչ երաշխիքների ապահովում	27.1. Քննչական գործողությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նկատառումներով ոստիկանության տարածքային մարմիններում եւ քննչական ապարատներում հատուկ կահավորված (հայելապատ) սենյակների ստեղծում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
28.	Քաղաքացիների անձի եւ գույքի պահպանման ոլորտում առավել առաջադիմական մեթոդների եւ ձևերի ներդրում	28.1. Քաղաքացիների բնակարանների եւ կազմակերպությունների գույքի, տրանսպորտային միջոցների պահպանման եւ ահազանգման տեխնիկական ժամանակակից սարքավորումների ձեռքբերում եւ համակարգի ներդրում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	Ոստիկանություն
29.	Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց	29.1. «Ձենքի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում	Ոստիկանություն

	մատուցվող ծառայությունների որակի բարելավում	մշակում 29.2. «ՀՀ տարածքում քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության 26.10.1999 թ. թիվ 673 որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		29.3. «ՆԳ մարմինների կողմից ՀՀ տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի եւ դրա փամփուշտների շրջանառության նկատմամբ իրականացվող վերահսկողության կարգի մասին» հրահանգը հաստատելու վերաբերյալ ՀՀ ՆԳ նախարարի 15.03.2002թ. թիվ 101 հրամանում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
		29.4. «ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց վճարովի հիմունքներով դատվածության եւ արխիվային տվյալների մասին տեղեկանքների տրամադրաման ծառայություն մատուցելու կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
30.	Հասարակական կարգի եւ անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների (այդ թվում՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ զենքի գործադրման առումով) իրականացման իրավական բազայի կատարելագործում	30.1. Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Ազգային Անվտանգության խորհրդի աշխատակազմ
		30.2. «Ոստիկանության մասին» եւ «Ոստիկանության գորքերի մասին» ՀՀ օրենքներում» փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն

	մշակում			
	30.3. Հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ զենքի գործադրման ուղեցույցերի մշակում ու ներդրում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն
	30.4. Զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցություններ վարող ծառայողների համար ուղեցույցերի մշակում եւ ներդրում	2011թ. 1-ին կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն

ե) Քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի եւ մուտքի հետ կապված գործընթացների հստակեցմանը, ոստիկանության կողմից իրականացվող միգրացիոն վարչարարության կատարելագործմանն ուղղված բարեփոխումներ

31. Ոստիկանության կողմից առանձին ծառայությունների մատուցման ժամանակակից չափանիշների ներդրում, տեխնիկական հագեցվածության ապահովում, աշխատանքների թափանցիկության ապահովում	31.1. Քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի եւ մուտքի հետ կապված գործընթացներում աշխատանքային նոր մեթոդների ներդրում, քաղաքացիների ընդունելության «մեկ դահլիճի» սկզբունքի կիրառում	2010թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	Ոստիկանություն
	31.2. Աշխատանքային սպասարկման պայմանների բարելավում (աշխատանքի կազմակերպման տեխնիկական հագեցվածության ապահովում, ՀՀ օրենսդրությունը լուսաբանող ցուցատախտակներով եւ այլ անհրաժեշտ գույքով կահավորված սպասարանների ստեղծում եւ	2010թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	Ոստիկանություն

	այլն)				
	31.3. «Ինտեգրված սահմանի կառավարման ծրագրի» շրջանակներում սահմանային անցակետերի տեխնիկական վերազինում, շենքային պայմանների բարելավում	2010-2011թթ.	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Պետական եկամուտների կոմիտե, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ	
	31.4. «Օտարերկրացիների մասին» եւ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքների եւ դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի մատչելիության ապահովում՝ դրանք տեղադրելով ՀՀ ոստիկանության, Արտաքին գործերի եւ Մփյուռքի նախարարությունների պաշտոնական կայք-էջերում օտար լեզուներով (անգլերեն, ռուսերեն եւ այլն)	2010թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	Ոստիկանություն, Արտաքին գործերի նախարարություն, Մփյուռքի նախարարություն	
	31.5. ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ում և դիվանագիտական (հյուպատոսական) հիմնարկներում տեսանելի վայրերում և նրանց պաշտոնական կայքէջերում ՀՀ քաղաքացիության և օտարերկրյա քաղաքացիների մասին օրենսդրության առանձին դրույթները մեկնաբանող գործողությունների պարզեցված սխեմատիկ պատկերների (ալգորիթմի) զետեղում	2010թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	Ոստիկանություն, Արտաքին գործերի նախարարություն, Մփյուռքի նախարարություն	
32.	Վիզաների եւ կացության կարգավիճակների ձեռքբերման	32.1. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու	2010թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Արտաքին գործերի

<p>ընթացակարգերի կատարելագործում և հստակեցում</p>	<p>մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում</p>			<p>նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն, Տարածքային կառավարման նախարարություն, Մփյուռքի նախարարություն , Եվրոպական կառույցների հետ ՀՀ համագործակցության ինչպես նաև ՆԱՏՕ-ի անհատական գործընկերության գործողությունների ծրագրի և ԵՄ Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի իրականացման նպատակով հանձնաժողով (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով)</p>
	<p>32.2. «ՀՀ կառավարության 04.04.2008թ. թիվ 329-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում</p>	<p>2010թ. 1-ին կիսամյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջում</p>	<p>Ոստիկանություն, Արտաքին գործերի նախարարություն, Ազգային</p>

				անվտանգության ծառայություն, Տարածքային կառավարման նախարարություն, Մփյուռքի նախարարություն	
	32.3. «Կացության հատուկ կարգավիճակ ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի կարգադրության նախագծի մշակում	2010թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Արտաքին գործերի նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն, Նախագահի աշխատակազմ, Տարածքային կառավարման նախարարություն, Մփյուռքի նախարարություն	
	32.4. Քաղաքացիություն և կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ դիմումների ընթացքի վերաբերյալ էլեկտրոնային համակարգի միջոցով տեղեկատվություն ստանալու հնարավորության ստեղծում	2010թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	Ոստիկանություն	
33.	ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու գործընթացի պարզեցում եւ հստակեցում	33.1. «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2010թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Մփյուռքի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն Ազգային անվտանգության ծառայություն, Տարածքային

				կառավարման նախարարություն, Մփյուռքի նախարարություն	
	33.2. «ՀՀ կառավարության 01.11.2007թ. թիվ 1290-Ն որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Մփյուռքի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն Ազգային անվտանգության ծառայություն	
	33.3. «ՀՀ կառավարության 23.11.2007թ. թիվ 1390-Ն որոշման մեջ փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Մփյուռքի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն Ազգային անվտանգության ծառայություն	
	33.4. «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում եւ հյուպատոսական հիմնարկներում ՀՀ քաղաքացու անձնագրի ձեւակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Արտաքին գործերի նախարարություն, Ոստիկանություն, Մփյուռքի նախարարություն	
34.	ՀՀ քաղաքացիների ՀՀ-ից մեկնելու եւ ՀՀ մուտք գործելու հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում	34.1. «ՀՀ քաղաքացիների ՀՀ-ից ելքի եւ ՀՀ մուտքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն, Տարածքային կառավարման նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն, Արտաքին գործերի նախարարություն,

				Սփյուռքի նախարարություն
զ) Նոր անձնագրային համակարգի ներդրման հետ կապված բարեփոխումներ				
